ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԴՊՐՈՑ
ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հետազոտության թեմա՝
Բառակազմական վերլուծությունը որպես բառապաշարի հարստացման և սովորողի վերաբերմունքի ձևավորման միջոց:

Հետազոտական հարց՝
Բառակազմական վերլուծության ի՞նչ ձևեր կարելի է կիրառել սովորողների բառապաշարի հարստացման և մայրենի լեզվի հանդեպ վերաբերմունքի ձևավորման համար (6-րդ դասարան):

Ուսուցչի տվյալներ՝
Մարինե Ռևազի Ունուսյան
Մանկավարժ

Հայոց լեզու և գրականություն
6ե,7գ,9դ,9է դասարաններ

Ուսումնական հաստատության տվյալները՝
Երևանի Նիկոլ Աղբալյանի անվան հ.19 հիմնական դպրոց
Հասցե՝ ք. Երևան, Տերյան 54
Հեռ.՝ 010 587350, 010 561608
nikol.aghbalyan@list.ru
yerevan19.schoolsite.am we

Բովանդակություն

Հետազոտական աշխատանք - —----------1
Տիտղոսաթերթ ——----------1
Բովանդակություն ——----------2
Ներածություն —----------3
Հայերենի բառակազմությունը ——----------5
Օգտագործված մեթոդները ——----------9
Եզրակացություն -—----------10
Օգտագործված գրականության ցանկ —----------12
Հավելված 1 —----------13
Հավելված 2 ----------23

Ներածություն

Կրթությունը գիտելիքների քանակը չէ, այլ լիակատար ըմբռնումն
ու հմուտ կիրառումն այն ամենի, ինչ գիտես:
Ադոլֆ Դիստերվինգ

Ամբողջ աշխարհի համար կրթության բարեփոխումը առաջնային խնդիր է համարվում: Այն վաղուց իրողություն է դարձել նաև մեզանում:

Ուսուցման ավանդական ձևերի կողքին կազմակերպվում է նորը՝ արդիականը, մշակվում են աշակերտների ուսուցման և զարգացման առավել արդյունավետ եղանակներ: Վաղուց արդեն կրթության բովանդակությունը մշակել և ավելի արդիական ձևերով ու մեթոդներով յուրացնել տալը վերապահվում է նաև դպրոցին և ուսուցչին:

Համաձայն հանրակրթական դպրոցի «Հայոց լեզու և գրականություն» ուսումնական բնագավառի առարկայական ծրագրերի՝ միջնակարգ դպրոցում հայոց լեզվի դասավանդումը զուգակցում է երկու կողմ՝ բուն լեզվի իմացություն, այսինքն՝ այդ լեզվով հաղորդակցվելու, տարբեր բնույթի գրավոր և բանավոր շարադրանք ստեղծելու կարողություն և լեզվի քերականական կառուցվածքի իմացություն (տեսական լեզվաբանական գիտելիքներ):

Առաջնությունը տրվում է լեզվի գործնական կիրառությանը, իսկ տեսական գիտելիքները տրվում են նվազագույն չափով, այնքանով, որ նպաստեն վերոնշյալ խնդրի լուծմանը:

Առարկայական նոր չափորոշիչի և ծրագրերի համաձայն՝ քերականական նյութի բաշխումն ըստ դասարանների («Բառագիտություն»՝ 6-րդ դասարան) չի նշանակում, որ այս նյութի ուսուցումը կսահմանափակվի միայն որոշակի ժամերի շրջանակներում կամ այդ ժամերին կուսուցանվի զուտ այդ նյութը և կանտեսվեն լեզվական մյուս միավորները: Լեզուն կառուցվածքային միավորների ամբողջություն է, որտեղ մակարդակային միավորներն ուսուցանվում են փոխադարձ կապի մեջ:

Լեզվի գործնական ուսուցման նպատակն է զարգացնել սովորողների իմացական ընդունակությունները, տրամաբանությունը, վերացարկված մտածողությունը, իմ ընտրած նյութի դեպքում՝ բառակազմական միավորների ճանաչումը, բառակազմական հմտությունների մշակումը, վերլուծությունը, նոր բառեր կազմելու և դրանք խոսքում կիրառելու կարողությունների ձևավորումը:

Հետազոտական աշխատանքը 6-րդ դասարանում:

Հետազոտության նպատակը՝ ուսումնասիրել բառակազմության թեման և գտնել ուսուցման այնպիսի մեթոդներ,որոնց շնորհիվ աշակերտները ոչ միայն կիմանան բառերի կազմության առանձնահատկությունները, այլև այդ ամենը օժանդակի նրանց բառապաշարի հարստացմանը: Բառակազմության ուսումնասիրությունը նպատակ պետք է հետապնդի լեզվական միջոցների ու երևույթների գիտակցական յուրացում և այդ միջոցներով խոսքի հարստացում:

Ինչպես կարելի է բառակազմական գիտելիքները, կարողությունները և վերլուծությունը ծառայեցնել որպես սովորողի վերաբերմունքի ձևավորման միջոց բառապաշարի հարստացման համար: Լեզվական բազմաթիվ մեթոդներ կիրառելով՝ գեղարվեստական գրականության մեջ կարողանալ բառակազմությունը դիտել որպես բառապաշարի հարստացման միջոց, ընկալել ածանցի նշանակությունը լեզվի բառապաշարի հարստացման գործում,բառերի բառակազմական վերլուծությունը , (գտնել բառի բաղադրիչները՝ արմատներ,ածանցներ, հոդակապ, նշել արմատի հնչյունափոխված և անհնչյունափոխված տարբերակները և այլն),դրանցով կազմել նախադասություններ , կապակցված խոսք:

Կարծում եմ՝ այս ամենը կնպաստի սովորողների կարողունակությունների դրսևորմանը ու բառապաշարի հարստացմանը:

Հայերենի բառակազմությունը

Բառակազմությունը բառագիտության այն բաժինն է, որը ուսումնասիրում է բառի կառուցվածքը, կազմությունը, բաղադրիչները, կապակցման օրինաչափությունները: Նոր բառեր կազմվում են հիմնականում գիտության և տեխնիկայի զարգացման թելադրանքով,երբ նոր առարկաներ են ստեղծվում, կամ էլ հասկացություններ կան, որոնք դեռևս անուն չունեն: Գեղարվեստական ստեղծագործություններում հեղինակը նոր բառեր է հորինում խոսքն ավելի արտահայտիչ և նպատակասլաց դարձնելու համար:

Բառակազմությունը նաև նոր բառեր կազմելու գործընթացն է (ածանցում, բառաբարդում) և լեզվի բառապաշարի համալրման ու հարստացման հիմնական միջոցն է:

Բառի բաղադրիչները

Բաղադրյալ բառ կազմող բառերը և մասնիկները կոչվում են բառակազմական բաղադրիչներ: Բառակազմական բառադրիչները ոչ թե բառաձևեր,այլ բառեր կազմելու համար են:

Բառակազմական բաղադրիչների տեսակները

Արմատ

Բառակազմական այն բաղադրիչները, որոնք կրում են բառի հիմնական իմաստը, կոչվում են արմատներ:

Օրինակ՝ գիր-ք,գր-ել,գր-ային, ան- գիր բառերի մեջ գիր բաղադրիչը արմատ է և արտահայտում է նշված բոլոր բառերի համար ընդհանուր <<հաղորդակցման նշանների համակարգ>> իմաստը:

Նշված բառերի մյուս բաղադրիչները լրացուցիչ իմաստները են տվել. դրանք բառիմաստ չեն արտահայտում,բայց փոխում են բառային խոսքիմաստային իմաստը:

Բառի կազմում արմատները կարող են լինել հնչյունափոխված և անհնչյունախոխ:

Օրինակ՝ ջրամբար, ջրային, ջրանցք, ջրատար բառերում արմատը ջուր բառի հնչյունափոխված ձևն է: Իսկ անձրևաջուր, մեղրաջուր, լվացքաջուր բառերում ջուր արմատը հանդես է գալիս անհնչյունափոխ ձևով:

Ածանց

Ածանցը արմատին կամ բառին լրացուցիչ իմաստ տվող և նոր բառ կազմող բաղադրիչն է: Հայերենում ածանցները կարող են ավելանալ արմատի կամ բառի սկզբից կամ վերջից: Ըստ այդմ լինում են նախածանցներ և վերջածանցներ:

Բառին սկզբից ավելացող ածանցը կոչվում է նախածանց: Օրինակ `ան++գետ,տ +գետ,ամենա+մեծ և այլն:

Բառին վերջից ավելացող ածանցը կոչվում է վերջածանց: Օրինակ՝ ծալ+ք,տենչ+ալի,տնտես+ություն,երկաթ+ե և այլն:

Հայերենում վերջածանցներն ավելի շատ են , քան նախածանցները:

Ածանցները չպետք է շփոթել այլ մասնիկների հետ: Օրինակ՝ ծառի, ծառից, ծառով, ծառում ձևերի նույնպես մասնիկներ կան՝ -ի,-ից,-ով,-ում, բայց սրանք ածանցներ չեն:

Ածանցները, ավելանալով արմատին կամ բառին ,իմաստային տարբեր կարգի փոփոխություններ կարող են առաջացնել:Կարող են ճշտել կամ փոխել բառի խոսքիմասային պատկանելությունը, միաժամանակ նաև փոփոխություն մտցնել հիմնական իմաստում ,ավելացնել վերաբերմունքային, զգացական երանգներ: Օրինակ՝ ձայն-բաղաձայն ,ենթաձայն, համաձայն, ձայնավոր, ձայնորդ, ձայնեղ և այլն:

Կան ածանցներ, որ կարող են կերտել մեկից ավելի խոսքի մասեր: Օրինակ՝ -անոց(խոհանոց,լիտրանոց),-ական(հիմնական, երեքական):

Բառակազմական հիմքակազմիչ մասնիկներ

Բառակազմությանը մասնակցում են նաև որևէ իմաստ չարտահայտող ընդամենը հիմքակազմիչ դեր կատարող մասնիկներ: Դրանք են հոդակապը, ձայնակապը և այլ հավելատարրեր, ընդ որում՝ դրանց առկայությունը չի փոխում բառի տեսակն ըստ կազմության: Դրանք ձևույթ չեն , քանի որ իմաստազուրկ են: Դրանց մի մասը հաճախ առաջացնում է արմատային տարբերակներ:

Հոդակապը արմատների կամ ածանցի ու արմատի միջև հայտնվող ա ձայնավորն է:

Օրինակ՝ տիրամայր, ենթամաս ,ամենաշքեղ, բուրաստան, օրագիր, վերադարձ և այլն: Հազվադեպ հանդիպում է ե հոդակապը(հաշվեգետ, ծաղկեփունջ, բաժնետեր, այցետոմս և այլն) :Հանդիպում են նաև հոդակապով /անհոդակապ զուգաձևություններ՝ կիս(ա)այրել, ջր(ա)շուն, չար (ա)լեզու և այլն:

Ձայնակապը հայերենում յ կիսաձայնն է, որ հայտնվում է բառակազմության(ինչպես նաև բառերի ձևափոխության) հետևանքով իրար հանդիպած ձայնավորների միջև և գրվում է միայն ա և ո ձայնավորներից հետո:

Օրինակ՝ խաղայի, երեկոյան, աղայի, Մարոյի, շուկայական և այլն:

Յ ձայնակապը ի,ու,ե ձայնավորներից հետո չի գրվում:Օրինակ՝ գրեի, վերարկուի, ձիու, միակ, Կարինեի և այլն:

Ձայնակապը երկհնչյուն է կազմում ոչ թե նախորդ,այլ հաջորդ ձայնավորի հետ, օրինակ՝ դայակ-յա,նայել-յե:

Բառերի տեսակներն ըստ կազմության

Բառերը կազմությամբ լինում են պարզ, բարդ, ածանցավոր և բարդածանցավոր:

Այն բառերը, որոնք բաղադրիչ մասերի չեն բաժանվում ,կոչվում են պարզ բառեր, ինչպես `տուն, քար, սար, որս, օր, ծառ և այլն:

Երկու և ավելի արմատներից կազմված բառերը բարդ են, ինչպես՝ հացթուխ,երկաթուղի, ճաշասենյակ, ծառկազարդ, լրագիր, լրագրավաճառ և այլն:

Արմատից և որևէ ածանցից (կամ ածանցներից) կազմված բառերն ածանցավոր են, ինչպես՝ անօթևան,ստորադաս, դասարան, գրավոր, լեռնային և այլն:

Բառեր էլ կան, որոնք կազմված են երկու կամ ավելի բարդ բառերից և մեկ կամ ավելի ածանցներից:

Դրանք բարդածանցավոր բառերն են, ինչպես՝ մայրաքաղաքային, լուսանկարչություն, հակասահմանադրական և այլն:

Բարդ բառերի տեսակները

Բարդ բառերը բաժանվում են երկու խմբի՝ համադրական և հարադրական:

Համադրական բարդ բառերի բաղադրիչները միացած, ձուլված են լինում, անանջատ են: Բառի բաղադրիչները կարող են միացած լինել հոդակապով, ինչպես ՝բանաստեղծ, ճաշատեսակ, տերևաթափ, տիեզերանավ: Դրանք հոդակապով բարդություններն են:

Բաղադրիչների միջև հոդակապ կարող է և չլինել, ինչպես՝ ջրմուղ, հացթուխ, մեներգ, մեղմօրոր և այլն: Համադրական բազմաթիվ բառեր կան, որոնց բաղադրիչները միացել են ու-ով կամ և- ով, ինչպես՝ անցուդարձ, հարցուփորձ, առևտուր:

Համադրական բարդ բառերի բաղադրիչներն առանձին են գրվում, ինչպես՝ ոչ ոք, մի քանի, թև ու թիկունք, պար գալ:Սրանք մեկ բառի իմաստ են արտահայտում: Օրինակ՝ ուր որ է- շուտով, ոտքից գլուխ- ամբողջովին, ծառ ու ծաղիկ-բուսականություն:

Հարադրական բարդ բառերի մեջ մեծ թիվ են կազմում գործողություն ցույց տվող բառերը: Օրինակ՝ մոտ գալ- մոտենալ, շուռ գալ-շրջվել, դուրս գալ-ելնել:

Համադրական և հարադրական բարդ բառեր կան, որոնք կազմվել են արմատի կամ բառի կրկնությամբ, ինչպես՝ գյուղեգյուղ, դարեդար, ուս

ուսի, դեմ առ դեմ, քիչ-քիչ:Այս կերպ կազմվելու դեպքում բաղադրիչներից մեկը հաճախ հնչյունափոխվում է : Օրինակ՝ աման-չաման, հաց-մաց, պարապ-սարապ և այլն:

Հապավական բարդություններ

Կա բարդության մի յուրահատուկ տեսակ, որի բոլոր բաղադրիչները կամ դրանց մի մասը ամբողջական արմատներ կամ բառեր չեն, այլ դրանց կրճատված ձևերը: Օրինակ՝ էլցանց,կազմբաժվար, ՄԱԿ, բուհ ևայլն:

Հապավումները երեք տեսակ են լինում՝ տառային, մասային և բառային:

ա)Տառային հապավումները կազմվում են բաղադրիչ բառերի առաջին տառերից: Օրինակ՝ ՄԱԿ-Միավորված ազգերի կազմակերպություն, ՌԴ-Ռուսաստանր Դաշնություն և այլն: Կան մի քանի բացառություններ, որոնք գրվում են փոքրատառով, օրինակ՝ բուհ-բարձրագույն ուսումնական հաստատություն:

բ)Մասային հապավումները կազմվում են բաղադրիչ բառերի առաջին մասերից: Օրինակ՝ դասղեկ-դասարանի ղեկավար, զինկոմ-զինվորական կոմիսար:

գ)Բառային հապավումները կազմվում են բաղադրիչ բառի առաջին մասից և ամբողջական բառից: Օրինակ՝ բուժաշխատող-բուժական աշխատող, շինհրապարակ- շինարարական հրապարակ:

ԿԻՐԱՌԵԼԻ ՍԵԹՈԴՆԵՐ՝ Մտագրոհ (մտքերի տարափ), կենաց ծառ, խմբային հնարներ, գծագրական հետազոտություն (աշխատանք), դիագրամների բուրգ, դասակարգիչներ, ճյուղավոր գծապատկեր, Վեննի դիագրամ, ԳՍՈՒ աղյուսակ:

Եզրակացություն

Այսպիսով՝ մայրենի դասընթացի բառակազմության թեման անցնելիս պիտի նպատակ ունենալ ուսուցումն այնպես վարել, որ այն օժանդակի աշակերտի բառապաշարի զարգացմանը: Բառակազմությունն անցնում են ոչ միայն նրա համար, որ աշակերտն իմանա,թե ինչ բան է ածանցը, արմատը, բարդ բառը, այլև հարստացնենք նրա բառապաշարը:

Ածանցները անցնելիս չպետք է բավարարվել ամենասովորական, աշակերտին ծանոթ օրինակներով. դրանք պետք են լեզվական երևույթը հեշտ ըմբռնել տալու համար: Բայց երբ աշակերտը սովորեց, թե ինչ բան է ածանցը, ինչ դեր է կատարում, նախ պիտք է անցնել նրա կիրառությանը:

Այսպիսով՝ գիտելիքների ուսուցումը իրականացվում է գործնական ճանապարհով՝ դասանյութերի և դասանյութերին հաջորդող հարցերին պատասխանելու և առաջադրանքների կատարման միջոցով: Արմատի, ածանցի,պարզ և բարդ բառերի ուսուցանելու համար չպետք է բավարարվել զուտ կանոններով: Աշակերտները ոչ միայն բնագրից գտնեն և ցույց տան պարզ, բարդ և ածանցավոր բառերը, այլև բացատրեն տրված բառերի իմաստները, կազմությունը,կարողանան վերլուծել, օգտագործեն դրանք նախադասությունների մեջ:Դրանով կհեշտանա նոր բառերի յուրացումը:

6-րդ դասարանում քերականական գիտելիքների ուսուցումը պիտի կրի գործնական բնույթ, ունենա լեզվական կարողությունների ձևավորման միտում և իրականացվի 6-րդ դասարանի մայրենիի դասագրքում զետեղված ընթերցանության նյութերի ուսումնասիրության ճանապարհով և նոր մեթոդներով: Այսպիսի մոտեցման դեպքում քերականությունն աշակերտը դիտում և սովորում է ոչ թե որպես գիտության դաս, այլև իր կողմից ընդունված, կիրառված կենդանի երևույթի մեկնաբանություն: Միաժամանակ գիտելիքների ձեռքբերման այդ եղանակը ուսուցման գործընթացը կդարձնի ոչ միայն արդյունավետ, այլև հետաքրքրաշարժ և հաճելի՝ սովորողներին

մղելով նոր գիտելիքների յուրացման միտված ինքնուրույն ուսումնական գործունեության:

Բառակազմության ուսուցումը 6-րդ դասարանի երեխաների համար չպետք է դառնա անհասկանալի կանոններ սերտելու գործընթաց:
Ընդհանրապես բառակազմության բաժնի յուրաքանչյուր նյութի ուսուցումը բառապաշարի հարստացման անփոխարինելի միջոց է:
Օգտագործված մեթոդներ՝ մտագրոհ (մտքերի տարափ), կենաց ծառ, խմբային հնարներ, դիագրամների բուրգ, դասակարգիչներ, Վիեննի դիագրամ, ԳՍՈՒ աղյուսակ, խմբավորում:
Ուսումնական նյութեր՝ դասագիրք, պաստառներ, նշագրիչներ, դպրոցական բառարաններ:

Օգտագործված գրականության ցանկ

- Հանրակրթական դպրոցի <<Հայոց լեզու, գրականություն>> ուսումնական առարկայական ծրագիր,Ե.2006,էջ 1:
- Ա.Ղարիբյան Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա:
- Հ. Զաքարյան,Յու. Ավետիսյան Բառագիտություն,Ե. 2016
- Դ.Գյուրջինյան,Թ.Ալեքսանյան,Ա.Գալստյան 6-րդ Մայրենի
- Գյուլբուդաղյան Ս. Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան 1987թ.
- Մարգարյան Ս. ժամանակակից հայոց լեզու Ե. 1990, էջ 406
- Սուքիասյան Ա., ժամանակակից հայոց լեզու,Ե.,1982թ.,էջ318

Հավելված 1

Դասի պլան

ԴԱՍԱՐԱՆ VI:

ԴԱՍԻ ՆՅՈՒԹԸ՝ Բառակազմություն: Բառի բաղադրիչները արմատ, ածանց, հոդակապ: Պարզ և ածանցավոր բառեր:

ԴԱՍԱԺԱՄ՝ 2:

ԴԱՍԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿԸ՝ I դաս - արմատի ուսուցման համագործակցային դաս ԽԻԿ համակարգով, II դաս - համակցված դաս (ածանցի ուսուցում):

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ՝

1) ընկալել բառի կառուցվածքը, ճանաչել նրա բաղադրիչ տարրերը ,

2) դիտել բառակազմությունը որպես բառապաշարի հարստացման միջոց ,

3) ճանաչել հնչյունափոխված և անհնչյունափոխ արմատները, ածանցները, անսխալ գրել բաղադրյալ բառերը ,

4) ձևավորել բառակազմական բաղադրիչները (արմատը և ածանցը) տարբերելու կարողություններ,

5) մշակել բառը բառակազմորեն վերլուծելու հմտություններ ,

6) ձևավորել նոր մեթոդներով աշխատելու կարողություններ և հմտություններ:

Հիմնական հասկացությունը-Բանավոր և գրավոր

Խաչվող կամ ընդհանրական հասկացություն-Կառուցվածք ու գործառույթ

Վերջնարդյունք-Բառի գործածության ոլորտում գիտելիքների ընդլայնում, հարստացում, բառակազմական վերլուծություն, ճանաչի և տարբերակի բառերի արմատը, ածանցը, հիմքը և վերջավորությունը:

ԿԻՐԱՌԵԼԻ ՍԵԹՈԴՆԵՐ՝ Մտագրոհ (մտքերի տարափ), կենաց ծառ, խմբային հնարներ, գծագրական հետազոտություն (աշխատանք), դիագրամների բուրգ, դասակարգիչներ, ճյուղավոր գծապատկեր, Վեննի դիագրամ, ԳՍՈՒ աղյուսակ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ՝ դասագիրք, պաստառներ, նշագրիչներ, դպրոցական բառարաններ:

I ԴԱՍ: ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ՝ Խթանման փուլ:

Դասի նախապատրաստման փուլում աշակերտներին արտահայտիչ կարդալ եմ տալիս գրատախտակին գրված ասույթը, որն իրբև բնաբան կծառայի ամբողջ դասի համար. «Բառերն ապրում են ոչ բառարաններում, ոչ էլ գրքերում: Բառերի կյանքը գործածության մեջ է: Լեզուն մտածողություն լինելով՝ նաև գործիք է, իսկ այդ գործիքն ապրում է բանելիս և բանելով, հակառակ դեպքում փտում է կամ ժանգոտում»: (Պ.Սևակ):

Մինչև արմատի ուսուցմանն անցնելը (սա բառակազմության ուսուցման հիմքն է) առաջադրում ենք հենակետային մի շարք հարցեր: Լավ ընտրված հարցերն ու դրանց պատասխանները անցած և անցնելիք գիտելիքների միջև կապեր հաստատելու, համագործակցություն ապահովելու լավագույն միջոց են:

«Ի՞նչ է բառը», «Ի՞նչ հատկանիշեր ունի բառը», «Ի՞նչ դեր ունի այն մեր կյանքում», «Ի՞նչ է նշանակում բառի կենսագրություն» կամ «Բառերն ունե՞ն կեսագրություն», «Բառերը կարո՞ղ են հնանալ», «Կարո՞ղ ենք բառերը փոխարինաբար վերցնել ուրիշներից (այլ լեզուներից)»: Հարցերի պատասխանները լսելուց, քննարկելուց հետո անցնում եմ դասի II փուլին:

Իմաստի ընկալման փուլ:

Սա անմիջական դասավանդման, նոր նյութի հաղորդման ընթացքն է: Աշակերտներին հանձնարարում եմ դիտարկել բույն, հաց, սիրտ, երազ, ծով, խոտ, կապույտ բառերը և պատասխանել հետևյալ հարցին. «Հնարավո՞ր է տրված բառերը բաժանել իմաստ արտահայտող բաղադրիչների»: Նկատում են, որ հնարավոր չէ. կրճատումները կլինեն կամայական, անիմաստ, քանի որ այս և նման բառերը պարզ բառեր են՝ բառարմատներ: Հակադրության նպատակով առաջարկում ենք բառերի մեկ այլ խումբ՝ ակնթարթ, քարեղեն, լուսնոտ, ջրվեժ, լուսաշող, կուսակրոն, երկնահուպ, բարձրաշեն, կարմրավուն, բարեկամական և այլն: Հանձնարարում եմ բառերը բաժանել բաղադրիչների, ընդգծել

անհնչյունափոխ արմատները մեկ գծով, հնչյունափոխված արմատները՝ կետգծերով:

Բոլորի ուշադրությունը հրավիրում եմ գրատախտակին, կարդալ տալիս բառերի միայն հիմնային բաղադրիչները (ընդգծվածները), դրանք անվանում եմ արմատներ, բացատրում եմ, որ սրանք այն ատաղձն են՝ շինանյութը, որով ամբողջանում և իմաստավորվում են բառերը (ակ(ն)+թարթ, լուս(ն)+ոտ, ջր+վեժ): Ապա անդրադառնում մ նաև մյուս բաղադրիչներին, որոնք անկախ գործածություն չունեն (-եղեն, -ոտ, -ավուն, -ական) և ա ձայնավորին (հոդակապին), ինչը միայն կապում, միացնում է արմատը արմատին կամ արմատը ածանցին (և հակառակը):

Բացատրություններից, վերլուծություններից հետո փորձում եմ ամբողջացնել 2 փուլերի արդյունքում ձևավորված մտքերը և տալ արմատի սահմանումը. «Արմատը բառի հիմնական իմաստն արտահայտող մասն է»:

Իմաստի ընկալման փուլում կազմակերպում եմ խմբային աշխատանք: Ձևավորում եմ աշխատանքային 5 խումբ՝ խմբային հետազոտության նպատակով: Ձևավորված խմբերին հանձնարարում եմ դասագրքից կարդալ «Արմատ»-ին վերաբերող համապատասխան հատվածը, ինչը աշակերտներին հնարավորություն կընձեռի ամբողջական պատասխաններ տալու իրենց ուղղված հարցերին և ստանալու հանձնարարություններ, առաջադրանքներ: Առաջադրանքները կատարելու համար տրվում է 10-12 րոպե:

I խումբ - Տրված բառերին (արմատներին) նոր բաղադրիչներ ավելացնելով՝ նորանոր բառեր ստացեք, սեր, սիրտ, մայր, տուն, դաշտ, միրգ, խոսք, հյուր, միտք, հհանալ, վազք, միանալ, ջուր, լրանալ: Ընդգծե՛ք այն արմատները, որոնք ինքնուրույն չեն գործածվում:

II խումբ - Տ-աձև աղյուսակի համապատասխան սյուներում առանձնացրե՛ք բառերի հնչյունափոխված և անհնչյունափոխ արմատները: Նշեք հնչյունափոխությունը: Խցել, ընկուզենի, թրծել, քաղաքային, փչակ, տետրակ, կրկնավոր, բուժակ, ճոճանակ, բնական, օրրան, երկրային, ջերմորեն, կարմիր, մեծատուն, նորածին, ձյունասպիտակ, գրչակ, հացթուխ, որսորդ, երկաթյա:

III խումբ - Բնագրային հատվածում («Հայկ և Բել», Մայրենի 6, էջ 93-95) գտե՛ք հնչյունափոխված արմատները, վերականգնե՛ք դրանց անհնչյունափոխ ձևերը:

Նմուշ՝ բռնակալ - բուռն (ու > ը) ստրկացող - ստրուկ (ու > ը)

IV խումբ - Բնագրային հատվածում («Հայկ և Բել», Մայրենի 6, էջ 93-95) գտե՛ք պարզ (արմատական) բառերը և կազմե՛ք բառափնջեր: Նմուշ՝



V խումբ - ա) Բառակապակցությունների իմաստն արտահայտե՛ք 1 բառով: Նշեք, թե բաղադրիչներն ինչպե՞ս են միացել:

Հողից ծնված =	ձու ուտող =
ձայն սփռող =	մատյան գրող =
քարով շինված =	հույսը հատած =
կավով ծեփված =	լույսով վառված =
ճյուղերը կոտրված =	առյուծի սիրտ ունեցող =

բ) Հետևյալ շրջասույթների իմաստն արտահայտե՛ք մեկ բառով.

Արծաթե թռչուն -	գարնան ավետաբեր -
Ադամի զգեստ -	գրքերի գիրք -
արճճի լեզվով խոսել -	կաշվե ձեռնոցի վարպետ -
Բաքոսի երկրպագու -	ագռավի լեզու-

Աշխատանքային ժամանակը լրանալուց հետո յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր աշխատանքը՝ ուսուցչի կողմից տրվող մեկնաբանություններով, պարզաբանումներով, լրացումներով:

Կշռադատման փուլ:

Անդրադարձ է կատարվում ամբողջ նյութին: «Արմատ»-ի յուրացման ու ամրակայման համար աշակերտներին առաջարկում եմ դասարանում կազմել գծապատկերների բուրգ, որտեղ կամբողջանա արմատը՝ իբրև քերականական հասկացություն: Բուրգը գծագրական դասակարգիչ է, ինչը կազմում են ներքևից վերև բարձրանալով: 1-ին շերտում՝ հիմնաշերտում, գրում ենք

համապատասխան օրինակները, 2-րդ շերտում գրում ենք գլխագրերը՝ քերականական խմբերը, 3-րդ շերտում՝ ձևակերպում ենք սահմանումը, 4-րդ շերտում գրում ենք վերնագրերը: Արմատի վերաբերյալ բուրգը կունենա այս տեսքը.



III փուլի ավարտին առաջարկում եմ, «Կենաց ծառ» մեթոդական հնարը կիրառելով, ներկայացնել լեզուն որպես մի կառույց (համակարգ)՝ ծառի հիմքում դնելով արմատը, բունը տրամադրել բառին, դեպի վեր ձգվող մասը՝ նախադասությանը, ամբողջ վերնամասը (գլուխը)՝ խոսքին՝ ճյուղերին գրելով խոսքի տեսակները (գեղարվեստական, գիտական, առօրյա-խոսակցական, հրապարակախոսական, վարչական):

Հետևությունն այն է, որ առանց արմատների՝ խոսքի կենսական միավորների չենք կարող հաղորդակցվել՝ խոսք կազմել:



Տնային հանձնարարությունները կարող ենք ընտրել ինչպես անհատական բնույթի, այնպես էլ ամբողջ դասարանի համար նախատեսված:

Առաջադրանք 1. «Արմատ» բառով կազմեք ակրոստիքոս (բանակապ, ծայրակապ): Այս առաջադրանքը կարելի է հանձնարարել միայն այն աշակերտներին, ովքեր օժտված են ստեղծագործելու կարողությամբ, պատկերավոր մտածողությամբ:

Առաջադրանք 2. Դպրոցական ուղղագրական բառարանից դո՛ւրս գրեք պարզ (արմատական) բառեր: Առաջադրանք 3. ա) Բնագրային հատվածներից դո՛ւրս գրեք պարզ բառերը և համապատասխան սյունակներում առանձնացրե՛ք հնչյունափոխ և անհնչյունափոխ արմատները՝ «Կաքավաբերդի բարձունքի միակ ծաղիկը ալպիական մանուշակն է...» հատվածն ամբողջությամբ և «Ծաղկափոշու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը ճոճք է թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան (Ա. Բակունց), բ) բնագրային հատվածից՝ «*Դու՝մրգերի շտեմարան...*» (Պ. Ավակ), դուրս գրեք պարզ և ածանցավոր բառերը ու դասդասեք համապատասխան սյունակներում:

II ԴԱՍԱԺԱՄ: ԴԱՍԻ ՏԵՍԱԿԸ ՝ Համակցված դաս (1 կամ 2 դասաժամ):

Ածանցի ուսուցումը սկսում ենք այդ բառի ստուգաբանությամբ, «ածանց» բառը ծագել է ածել բառից, որը նշանակում է ավելացնել: Բառակազմական ձևույթների միացության առանցքը արմատն է, ինչը միանում է զանազան ածանցների հետ և առաջ բերում բազմաթիվ ածանցավոր բառեր: Որպեսզի ածանցի դերն ու նշանակությունը բառակազմության շրջանակներում ավելի ցայտուն երևա, գրատախտակի կենտրոնում գրում ենք առանցքային որևէ պարզ բառ, օրինակ՝ գիր և սովորողներին առաջարկում ենք կազմել ճյուղավոր գծապատկեր՝ գիր բառին զանազան ածանցներ ավելացնելով (կարող ենք առաջարկել «գանձանակ»՝ ածանցների ընտրանիով, որոնց օգնությամբ էլ նոր բառեր կկազմվեն):



Աշակերտները եռանդ են դրսևորում և համեմատություն անցկացնելով՝ հեշտությամբ ընկալում են գիր բառի ու նրանից ածանցված նոր բառերի իմաստային որոշակի տարբերությունները, որոնք առաջացել են հենակետային (գիր) բառին միացած մասնիկների (ածանցների) շնորհիվ: Հաջորդաբար բացատրում են նոր կազմած բառերի իմաստները՝ հպանցիկ անդրադառնալով ածանցների իմաստներին, բնական լեզվազգացողությունը օգնում է աշակերտներին ըմռնելու, տարբերակելու ածանցների ամենաընդհանուր իմաստները (այս բաժինը դասագրքում առանձին ուսուցման նյութ է): Այսպես՝ գրչակ բառը ածանցավոր բառ է, ունի երկու վերջածանց՝ հնչյունափոխված (-իչ > չ) և անհնչյունափոխ (-ակ), նշանակում է մրող, վատ գրող (վարձկանագրիչ). ուրեմն գիր բառին բաղադրված երկու ածանցներն էլ որոշակի իմաստներ են հաղորդել՝ -իչ ածանցը՝ գրելու հարմարանքի, գործիքի (գրիչ), իսկ -ակ ածանցը, որը հիմնականում փոքրության իմաստ ունի, գրիչ բառից ստեղծել է անձի, մարդու (գրողի) անուն, այն էլ՝ բացասական իմաստով:

Երբ աշակերտներին առաջարկում ենք բառակազմական այդ մասնիկները՝ ածանցները, ինքնուրույն գործածել, ասենք, նախադասության մեջ, նրանք տարակուսում են, չեն կարողանում օրինակ բերել և համոզվում են, որ դա հնարավոր չէ. ածանցներն ինքնուրույն գործածվել չեն կարող. «Ածանցը ինքնուրույն գործածություն չունեցող բառակազմական մասնիկ է, որը, միանալով հիմքին կամ բառարմատին, փոխում է նրա իմաստը: Ածանցի բառային իմաստը դրսևորվում է միայն այն դեպքում, երբ այն կցվում է բառին և դառնում նրա մի մասը: Սովորողներին ածանցների գործածության մեջ հմտացնելու, աշխուժացնելու նպատակով, նորանոր բառեր կազմելու գործընթացում կազմակերպում ենք խմբային լեզվական խաղեր:

Խաղ 1-ին. դասարանը բաժանում ենք 2 կամ 3 խմբի, յուրաքանչյուր խումբ ընտրում է իր ավագը: Խմբի ավագներից մեկն ասում է որևէ ածանց (նախածանց կամ վերջածանց), իսկ մյուս խմբի անդամները 1 րոպեում ասում և գրատախտակին հաջորդաբար գրում են այդ ածանցով կազմված որքան հնարավոր է շատ բառեր: Հաղթում է այն խումբը, որը տրված ժամանակահատվածում ավելի շատ բառեր է կազմում:





Խաղ 2-րդ. նույն խմբերի ավագները (մայրենիի դասագրքի համապատասխան բնագրից կամ ուսուցչի օգնությամբ) ասում են մեկական պարզ բառեր, իսկ մյուս խմբի անդամները 1 րոպեում կազմում են բառափնջեր՝ տրված բառերին ածանցներ կցելով.

Խմբերի գնահատումն իրականացնում եմ նախապես գրված սանդղակի միջոցով՝ գնահատման չափանիշեր ընտրելով խմբի անդամների լեզվական մտածողությունն ու արագ կողմորոշվելու հնարավորությունը, խմբի համագործակցությունը և կարգապահությունը:

Սովորողների օգնությամբ սահմանում ենք «ածանց» հասկացությունը. «Ածանցը մասնիկ է, որի միջոցով նոր բառ է կազմվում» (Մայրենի 6, էջ 104):

Ապա վերհիշում ենք՝ ինչ է վերջավորությունը, բերում ենք օրինակներ և ներկայացնում ենք ածանցի և վերջավորության դերն ու նշանակությունը:

«Արմատ» և «Ածանց» բաժինների ամփոփման, գիտելիքների ամրակայման լավագույն միջոց կարող է լինել Վեննի գծապատկերը՝ գծագրական դասակարգիչ, որով դրսևորվում է սովորողների լեզվազգացողությունը, լեզվական երևույթները համեմատելու, հակադրելու, առանձնահատկությունները որոշարկելու կարողությունները: Աա և այլ գծագրական դասակարգիչներով, ժամանակակից մեթոդներով շատ են աշխատում ավելի բարձր դասարաններում (հատկապես՝ ավագ դպրոցում), սակայն, կարծում ենք, միջին դպրոցում (հատկապես 5-րդ, 6-րդ դասարաններում) ուսուցչի գերակա մասնակցությունը գծապատկերներ կազմելու գործընթացում կնպաստի աշակերտների վերացարկված մտածողության և ընդհանրապես լեզվամտածողության ձևավորմանը:



Ածանցների տեսակներն ըստ դիրքի ուսուցանելու նպատակով առաջարկում եմ կիրառել «խմբավորում» մեթոդական հնարը մի փոքր այլ մոտեցմամբ:

Այս մեթոդական հնարը կարող ենք կիրառել լեզվի տարբեր բաժինների առնչությամբ (նաև ավագ դպրոցում) բարդ բառերի տեսակները, այլև ածանցների տեսակներն ըստ խոսքիմասային պատկանելության ուսուցանելիս նաև այլ նյութերի առնչությամբ՝ ուսուցչի հայեցողությամբ:

Աշխատանքը կարելի է կազմակերպել թե անհատական, թե՛ զույգերով, թե խմբերով: Նախընտրում ենք զույգերով աշխատանքը: Դասարանի զույգ կազմած աշակերտներին բաժանում ենք նախօրոք պատրաստած թերթիկներ (փոքրիկ պաստառներ), որտեղ խառը գրված կլինեն պարզ և ածանցավոր բառեր: Պահանջում եմ գունավոր մատիտներով կամ նշագրիչներով միացնել այն բառերը, որոնք առնչվում են իրար, այսինքն՝ միավորվում են նույն սկզբունքով՝ պարզ են, նախածանցավոր, վերջածանցավոր (ունեն և՛ նախածանց, և՛ վերջածանց): Պաստառի վրա նշում ենք նաև առնչվող բառերի գույները:

«Խմբավորում», պարզ և ածանցավոր բառեր:

Միացնել՝ պարզ բառերը կապույտ գույնով, նախածանցավոր բառերը կարմիր գույնով, վերջածանցավոր բառերը կանաչ գույնով, համածանցավոր բառերը դեղին գույնով:

Հարցեր, առաջադրանքներ, վարժություններ:

1. Բառը բառակազմական ի՞նչ միավորներից է կազմված:

2. Ո՞ր միավորների իմաստը որոշելն է դժվար՝ բառի՞, արմատի՞, թե՞ ածանցի: Ո՞րն է այդ դժվարության պատճառը:

3. Ածանցները կարո՞ղ են հնչյունափոխվել: Կարո՞ղ է միևնույն բառն ունենալ մի քանի վերջածանցներ, բե՛ր օրինակներ:

4. Կարո՞ղ է միևնույն ածանցը լինել և՛ նախածանց, և վերջածանց:

5. Փորձիր լրացնել ԳՍՈՒ աղյուսակի III սյունակը «Բառակազմության» վերաբերյալ:

Գիտեմ	*Սովորեցի*	*Ուզում եմ իմանալ*
Հնչյունը Բառը Արմատը Ածանցը	Արմատը և ածանցը բառակազմական մասնիկներ են, իսկ վերջավորությունը՝ ոչ: Համածանցավոր են այն բառերը, որոնք ունեն և՛ նախածանց, և վերջածանց: Կամ արմատներ են, և ածանցներ:	

Վարժություն 1. Քառաթև աղյուսակի համապատասխան շարքերը լրացրու բառակազմական համապատասխան նմուշօրինակներով.

Նախածանց + արմատ	արմատ + վերջածանց	նախածանց + արմատ + վերջածանց	արմատ + վերջածանց + վերջածանց

ան + տուն	տուն + այի	առ + տուն + ին	տուն + այի + գործ +ական

Հավելված 2






Գիր // գր
գրիչ
գրող
գրային
մակագրություն
գրքույկ
համագիր
վերնագրել
տարագիր
գրչակ
գրականություն
գիրք
արտագրել
գրվածք
ստորագրություն
անգիր


Արմատ
*ունի առանցքային հիմնական իմաստ
*կարող են գործածվել անկախ, ինքնուրույնաբար (կան բացառություններ), դառնալ նախադասության անդամ
Բառակազմա - կան բաղադրիչներ են: Բառի կազմում կարող են հանդես գալ հնչյունափոխված և անհնչյունափոխ:
Ածանց
*ունի ամենաընդհանուր իմաստ. միանալով բառին՝ նոր իմաստ է հաղորդում և նոր բառ է կազմում,
*առանձին չի գործածվում,
* ավելանում են բառի թե՛ սկզբում, թե՛ վերջում:
Հիշենք՝ ածանցը չշփոթել վերջավորության հետ, օր.՝ պարտեզ(ի, ից) – պարտիզ*ակ*